

## Հայտարարություն

### **ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու նպատակով մրցույթ անցկացնելու մասին**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքային համայնքի /այսուհետ՝ Համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի աշխատակազմի /այսուհետ՝ Աշխատակազմ/ համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոններ զբաղեցնելու համար.

#### **1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, բնակֆոնդի շահագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի առաջատար մասնագետ/ծածկագիր՝/3.1-3/**

Աշխատակազմի քաղաքաշինության, բնակֆոնդի շահագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի քաղաքաշինական կադաստրի վարման աշխատանքներին, առաջարկություն է ներկայացնում կառուցապատողների ճարտարապետահատակագծի առաջադրանք տալու վերաբերյալ, իրականացնում է համայնքի սեփականություն համարվող շենքերի և շինությունների հաշվառումը և բաշխումը, կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, մասնակցում է շինության /քանդման/ թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու գոծառույթների իրականացումը, ինքնական շինությունների կանխարգելման, կասեցման աշխատանքներին և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

#### **2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, բնակֆոնդի շահագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի առաջատար մասնագետ/ծածկագիր՝/3.2-19/**

Աշխատակազմի քաղաքաշինության, բնակֆոնդի շահագործման, կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի պետի հանձնարարությամբ կազմում է համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեման, հսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Կատարում է համայնքի վարչական սահմաններում գտնվող վարելահողերի ընթացիկ հաշվառումը և կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը: Առաջարկներ է ներկայացնում համայնքի սեփականություն համարվող հողատարածքները՝ սահանված կարգով օտարելու կամ օգտագործելու վերաբերյալ, ինչպես նաև ապահովում է ապօրինի հողօգտագործումը կասեցնելու և վերացնելու ուղղությամբ:

#### **3 .Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ/ծածկագիր՝/3.2-1/**

Աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի հանձնարարությամբ կապ է պաշտպանում անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների հաշվառում իրականացնող

կազմակերպությունների հետ և պահանջում տեղեկատվություն ,վարում է գույքահարկվող օբյեկտների տեղեկատվական բազան, լրացնում է իրավաբանական անձանց անձնական հաշվառման քարտերը, պատրաստում և բաժանում է ֆիզական անձանց հարկային անդորրագրերը, իրականացնում ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքահարկի հաշվառման գործառնությունները: Կատարում է իրավաբանական անձանց հայտերի գրանցումը և հաշվառումը, սահմանում վճարման անդորրագրերի և հայտերի ճիշտ և ժամանակին ներկայացման ընթացակարգը:

#### **4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ/ծածկագիր՝/3.2-15/**

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մշակում և ներկայացնում է քաղաքում իրականացվող սպորտային միջոցառումների պլանները, աջակցում է քաղաքում սպորտային միջոցառումների կազմակերպման աշխատանքներին, մասնակցում է ՀՀ տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների կազմակերպմանը , աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին :Միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողներին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի, սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքներին, օժանդակում է համայնքի տարածքում սոցիալական ծառայության օգնության ծառայության գործունեությանը:

#### **Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝**

Առնվազն միջնակարգ կրթություն, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**Մրցույթները կանցկացվի 2014 թվականին հունվարի 15-ին ժամը 10.00-ին ՀՀ Սյունիքի մարզի՝Քաջարանի քաղաքապետարանի շենքում՝ ՀՀ Սյունիքի ք.Քաջարան Լեռնագործների 4, հասցեում:** Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում մրցությային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

- արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
- անձնագրի պատճենը:

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն իրենց ցանկությամբ Աշխատակազմ կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն են հանձնում անձամբ՝ ներկայացնելով անձնագիր: Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ը, մինչև ժամը 18.00-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները՝ փաստաթղթերը հանձնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Աշխատակազմ (հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք Քաջարան, հեռ.՝ 0285-32341, 0285-321811) կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն (հասցե՝ ՀՀ ք.Կապան, Գ.Նժդեհի 1. Հեռ.՝ 0285-23550):